ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբերի 2-ին, երեքշաբթի.—Երեկոյան ժամը 19-ին Երևանի հայրապետական վիլլայում Հայոց Հայրապետի նախագահությամբ գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Սեպտեմբերի 7-ին, կիրակի.—Դ կիրակի զկնի Վերափոխման.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Գրիգորիս աբդ. Բունիաթյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Ավետարանի հրաշքների խորհրդի և հոգևոր նշանակության մասին:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան մասնավոր կարգ՝ Մուսալեռի հերոսամարտի նահատակների հիշատակին:

*
* *

Սեպտեմբերի 10-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթը, որին ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը Մայր Աթոռ ժամանեց Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ և ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի վերատեսուչ տ. Շահե արքեպ. Անեմյանը՝ իբրև հայ եկեղեցու ներկայացուցիչ՝ նախագահելու համար Մայր Աթոռում գումարվելիք առաջինա համաօրթոդոքս խորհրդակցությանը:

*
* *

Սեպտեմբերի 14-ին, կիրակի.—Խաչվերաց.

Այսօր, օրվա մեծ տոնի առիթով, Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Շահե արքեպ. Անեմյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում խաչի խորհրդի մասին:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 17-ին, Մայր տաճարի շրջափակում հանդիսավորապես կատարվում է Խաչվերացի թափորի արարողությունը՝ հանդիսադրությամբ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

*
* *

Սեպտեմբերի 15-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Թորգոմ աբղ. Մուշեղյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան մասնավոր կարգ՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Սեպտեմբերի 17-ին, չորեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ է ժամանում Հյուսիսային Ամերիկայի հայոց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը՝ իրև հայ եկեղեցու ներկայացուցիչ մասնակցելու համար Մայր Աթոռում գումարվելիք համաօրթոդոքս խորհրդակցությանը:

*
* *

Սեպտեմբերի 18-ին, հինգշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Կանադայի հայոց առաջնորդական փոխանորդ տ. Արիս եպս. Շիրվանյանը:

*
* *

Սեպտեմբերի 19-ին, ուրբաթ.—Այսօր Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել ափյուռքի տարբեր երկրներից մայր հայրենիք ժամանած մի խումբ այնթապցիների, որոնք Հայաստան էին եկել Նոր Այնթապի ժանյակի գործարանի բացման կապակցությամբ:

Հանուն այնթապցիների Վեհափառ Հայրապետին ուղղված երախտագիտության արտագին խոսք ասաց Մայր Աթոռի բարերար այնթապցի տիար Գևորգ Պագրճյանը:

Հայոց Հայրապետը 1971 թվականի համար 702 Իր սրբատառ կոնդակով քաջալերել էր այնթապցիների հայրենասիրական նախաձեռնությունը:

Վեհափառ Հայրապետը Իր օրհնության և գնահատանքի խոսքն ասաց այնթապցիների հայրենանվեր ձեռնարկի կապակցությամբ և օրհնեց նրանց հայրենասիրական գործը՝ այն բնութագրելով հայրենիք-ափյուռք հարաբերությունների փաստական մի նոր վկայություն:

*
* *

Սեպտեմբերի 20-ին, շաբաթ.—Այսօր Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ Փարիզի հայոց ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում, որպես հոգևոր հովիվ, պաշտոնավարելու մեկնեց Մայր Աթոռի միաբան տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը:

*
* *

Սեպտեմբերի 26-ին, ուրբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեցին Կյուլպենկյան հիմնարկության հայկական բաժնի վարիչ Կորյուն Քեշիշյանը՝ իր հարգելի տիկնոջ հետ, Մայր Աթոռի բարերար տեր և տիկին Գեղամ Տանձիկյանները՝ Բեյրութից, և տիար Տիգրան Մյուրաքյանը՝ Բուենոս-Այրեսից: